


ԱՐԴԻԴՎԱԾ 195

9-388

“ՅԻՇԱՏԱԿԵՐՊՆ ԱՂԵՏԻՑ”

1971

# ԳՐԻԳՈՐԻ ԽԼԵԹԵՅԻՈՅ



ՊԱՏՄԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ


ՀՐԱՏԱՐԱԿԵՑ  
ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑ.

Արտադրության «Արարատ» ամսագրից

1968

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Կ  
**S. S. ՄԿՐՏՉԻ Ա.**

ՎԵՀԱՓՈՐ ԵՒ ՍՐԲՈԶՆԱԳՈՅՆ ԿՈԹՈՒՊԼԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅ



Վ Ա Գ Ա Ր Ե Ա Գ Ա Տ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷՇՄԻԱՆՆԻ

1897

СЕВЕРНЫЙ ГЛАВНОУПРАВЛЯЮЩИЙ  
СОСТОЯНИЕ ПРОДАЖ

СТАНОВЛЕНИЕМ СОВЕТСКОГО РЕСПУБЛИКИ

ВЫДАЧА ВСЕХ

СЕВЕРНЫЙ ГЛАВНОУПРАВЛЯЮЩИЙ

439.11



69042  
15888

Дозволено цензурою, 24 июня 1897 г. г. Тифлисъ.

ի ուստի ի աջնյալ ըստմայլ զաւու ու դի այժմ  
մաշնօթ ա երանեցախ օմե պատակ ըստմայլ այլայլ է  
մայդ ի ույսման ըմբանուու առն արքմանոց և  
մ ունչուան նու աշածմ լուսի ճանական  
ան արքմանու ծ առ պատմա եւ ըմբան ըստ  
ի այլ դի ա պատմա եւ ըմբան ըստ  
«ՑԻՂԵՏԱԿԱՐԱՆ ԱՂԵՑԻՑ»

## ԳՐԻԳՈՐԻ ԽԼԱԹԵՑԻՈՅ

Պատմական վիպասանուրիւն:

## ՆԱԽԱԲԱՆ

Գրիգոր Խլաթեցին՝ «որդի ծերին» կամ ծե-  
րենց մականունով, ծաղկել է ԺԴ-րդ գարու վեր-  
ջերին և ԺԵ-րդի առաջին քառորդում՝ իւր մայ-  
րենի Խլաթ ծննդավայրից ստացած լինելով Խլա-  
թեցի կոչումը: «Մնեալ և վարժեալ ի գործ քա-  
հանայութեան առ սուրբ Ճգնաւորի միոյ Վարդան  
կոչեցեալ» ասում է Խլաթեցու վարդապետներից  
մէկը, «ի հոչակաւոր ուխտ ս. Ստեփաննոս Ցիս-  
նավանք կոչեցեալ» և «վեց ամ սպասաւորեալ  
նմա»: — գնաց այնուհետև Գրիգոր կատարելագոր-

ծելու իւր ուսումը Սիւնեաց Երնջակ գաւառի  
 Ապրակունեաց վանքը «մեծ վարժապետ» Յոհան  
 Որոտնեցու մօտ՝ ուսումնակից ունենալով իրեն  
 հոմանուն՝ յետոյ մեծահռչակ Տաթևացուն, և  
 մնաց այնտեղ ութ տարի։ իսկ Յ. Որոտնեցու մա-  
 հից (1386թ.) յետոյ նա դարձաւ իւր բնիկ  
 գաւառը՝ «իւր հոգեոր հարազատ և համշիրակ»  
 գիտնական Սարգիս վարդապետի մօտ՝ Քաջբերու-  
 նեաց Արձէշ քաղաքի Սուխարայ վանքը և տասն  
 տարի «բազում աշխատութեամբ դեգերեալ»  
 ստացաւ նորանից աստիճան վարդապետութեան։  
 Խլաթեցու կեանքից յիշուում է այնուհետեւ, որ  
 նա ճանապարհորդել է վարդապետների և աշա-  
 կերաների ուղեկցութեամբ դէպի Սուրբ քաղաքը  
 (Երուսաղէմ), ուր կացել է Երկու տարի։ Հաւա-  
 նական է, որ այդ միջոցներին լինի վախճանած  
 Սարգիս վարդապետը (1401—1402թ.) որին  
 ինչպէս յայնի է, յաջորդում է Սուխարայ վան-  
 քում նորա աշակերտ և Խլաթեցու ընկերակից  
 Վարդան վարդապետը։ Հոգւոց վանքի ուխախց։  
 իսկ սորա մահից յետոյ, որ հանգիպեց Տուպայ  
 Սալնապատ վանքում, ուր հեռացած էր սա բար-  
 բարոս այլազգիների երեսից, — նոյն Սուխարայ ուխ-  
 ափի առաջնորդութիւնը վարեց կարճ ժամանակ

Խլաթեցին։ Սակայն իւր նախորդի պէս նեղուելով  
այլազգիների արշաւանքներից և ստիպուած լինե-  
լով թողնել Սուխարայ ուխտը, նա հեռացաւ իւր  
առաջին ուսումնատեղին՝ այն է Բղնունեաց Արծկէ  
քաղաքի Դաստակ կամ Ծիպնայ անապատի Ստե-  
փաննոս Նախավկայի վանքը։ Այստեղ անցրեց Դը-  
րիգոր իւր կեանքի մնացեալ օրերը՝ շարունակ  
նուիրուած լինելով գրական զբաղմունքների և բա-  
րեգործութեան և մեռաւ մարտիրոսական մահով՝  
նահատակուելով քրդերից 27-ին մայիսի, 1425  
թուին 75 կամ 80 տարեկան հասակում։<sup>1</sup>

Այս հաշուով Գր. Խլաթեցին պէտք է ծնուած  
լինի մերձաւորապէս 1350 թուականին, —իւր

1. ՏԵ՛ս Առաքել (ըստ Երեւութին՝ Սիւնեցի, աշա-  
կերտ Խլաթեցու) վարդապետի ճառը—«Նահատակու-  
թիւն Խլաթեցւոյ Գրիգոր Շերենց վարդապետի» ձե-  
ռագիր Յայսմաւուրքից քաղած—«Նօտարք Հայոց» հա-  
ւաք. Ղեւոնդ վ. Փերզալէմեան, Կ. Պոլիս, 1888, էջ  
75—77: Նոյն Առաքել Սիւնեցին իւր «Եղերդառութիւն և  
մահ նահատակութեան Շերենց Գրիգոր վարդապետի»  
շափաբերականում կոչում է իւր ուսուցչին նաեւ Գրի-  
գորիս Բգնունի: («Հայերգ», Տէվկանց, Թիֆլիս, 1883,  
էջ 175—180.)—ՏԵ՛ս Թումա Մեծորեցի, Պատմ. Լանկթա-  
մուրայ, Փարիզ 1860, էջ 14, 17, 41—43, 85. — Զամ-  
յեամ, Պատմ. Հայոց, Գ. 451—452:

սկզբնական ուսումը և կրօնաւորական կոչումը  
ստացած վարդան ճպեաւորի մօտ յտարի մնալուց  
յետոյ մօտաւորապէս մինչև 1375 թ. — կատա-  
րելագործած իւր ուսումը Յ. Արունեցու մօտ  
8 տարուայ ընթացքում՝ որ ասել է՝ ոչ ուշ քան  
1385 թ. (որովհետեւ յաջորդ թուին վախճանուեց  
«մեծ վարժապետը»), — և վարդապետական աստի-  
ճան ստանալու համար գեղերած լինելով Սարդին  
վարդապետի մօտ 10 տարի, այսինքն ոչ ուշ քան  
1400 թուականը (որովհետեւ այդ միջոցներին  
վախճանուեց Սարդին վ.): Եթէ Խլաթեցու Երու-  
սաղէմ գնալն ևս գնենք նորա վորդապետական  
աստիճանն ստանալուց յետոյ նախ քան վանա-  
հայրութիւնը, պէտք է որ այդ ուղևորութիւնը  
եղած լինի 1400—1405 թուերի մէջ, որովհետեւ  
յաջորդ 1406-ին նա ստանձնեց Սուխարայ ուխտի  
և կարծ միջոցից Ցիպհավանքի առաջնորդու-  
թիւնը:

Ժամանակակիցները — Թումա Մ'եծոբեցի, Առա-  
քել Սիւնեցի և այլք — մէծ զովութեամբ են խօ-  
սում Խլաթեցու մասին. «ոչ զոլով նման նմա-  
ռզօրմած և մարդասէր և սպասաւոր ազքատաց և  
տնանկաց», — կոչում են նորան «մեծ բարունա-  
պետ, որ ի վերջին աւուրիս քան զառաջինսն դե-

բագոյն երևեցաւ»։ որ «յիսուն և հինգ ամ զիրս  
զրեաց տիւ և դիշել անհանդիստ տքնութեամբ»։  
որ «կրկին վկայածէր երևեցաւ և զանյայտ պատ-  
մաւթիւնս սրբոց ի զոյս ածէր»։ որ «յօյժ ուսում-  
նասէր գոլով և մարտիրոսաց պատող՝ մարտի-  
րոսաց պատկայն եհաս» և այլն։

Դր. Խլաթեցու անունով համել են մեզ այլ  
և այլ զրուածքներ։<sup>2</sup> Աւելորդ չենք համարուամ  
առաջ բերել գոյժա համառօտ ցուցակը՝ օգտուելով  
մեր ձեռքի տակ եղած ազբիւրներից։ Հարկաւ  
ցանկալի էր ստուգել այս ցուցակը Խլաթեցու  
հնագոյն և ընտիր գրչագիրների հիմամբ և դորա-  
նով աւելի ճիշտ որոշել մեր հեզինակի գրականա-  
կան գործունէութեան ծաւալը։ որ պէտք է խռա-  
տովանել սակաւ ծանօթ է և բնաւ չէ ուսում-  
նասիրուած։

1. Նախ յիշելու է նորա ծաղերը, որոնց  
տուների կամ տողերի սկզբնատառերը, ոովորաբար  
հեղինակի անունն են կազմում։ Դնում ենք այս-  
տեղ մի քանի ծաղերի վերնագրերը՝ հետեւլով հ.

2. Հմմտ. մանաւանդ Հ. Յ. Տաշեանի «Ցուցակ  
Հայ. ձեռ. Մատ. Միկթ. ի Պետնաս, 1895—96, էջ  
543 և Ցանկը՝ էջ 1074։

Տաշեանի «Յուցակին»։ — Դանգատ ունիմ, Յարութեան, Գովութիւն Սաղմոսի, Գիւտ գօտւոյն Աստուածածնի։ — Վենետիկեան և Ղազարի մի գրչագիր ամփոփում է իւր մէջ 23 աղերսական Տաղեր։ Թէև ի նկատի ունենալու է միշտ, որ գրչագիրներում շփոթուում են յաճախ համանուն հեղինակների մանաւանդ մանր գրուածքները՝ մէկի երկը միւսին վերագրելով։

2. «Ողբ մեռելի», որ միքանի գրչագիր Գէորգ Երպնկացուն են վերագրում։

3. «Խրատական բաներս լաւ եւ ընտիր»։ — Աւրհնեալ է Հայրն Լուսոյ, Որ ստեղծ ըզմեզ ի հողոյ, Շնորհեաց մեզ միտք հանձարոյ, Առնել զկամս իւրոյ . . . և այլն, տունք Ա—Ք։

4. Դանձեր, որոնց տողերի սկզբնատառերը նոյնպէս հեղինակի անունն են կազմում։ Դնում ենք այսաեղ մի քանի գանձերի վերնադրերը՝ հետեւլով Հ. Տաշեանի «Յուցակին»։ — Թղթատութեան, Կիրակոսի, Վահանայ Գողթնեցւոյ, Տեառնընդառաջին, Առաջաւորաց, Ատովմեանց, Թէոդորոսի, Բ. Կիր. Աղուհացից, Կիւրդի, Յովհ. Երուսաղէմացւոյ, Ղազարու, Նոր Կիր., Ներսիսի Մեծի, Փոխման Աստուածածնի, Վարագայ Խաչի, ՀԲ. Առաքելոց, Յովակիմայ և Աննայի, և Նիկո-

զայռուի, Թագէոսի և Բարդուղիմէոսի, Խզնատիոսի  
Աստուածազգեցի, Որդւոց որոտման, Սուքիասանց,  
Աւագ Բշ. և Գշ., Գ. Կիր. Ազուհացից, գլխատ-  
ման Յովհաննու, Տապանակի, Դանձ Կիրակամտի,  
Գիշերապաշտման:—Սոցա վերայ աւելացնելու է  
«Արարատի» 1895 թ. ապրիլ համարում Ն. Քա-  
րամեանցի հրատարակած 16 տող գանձը: 8եւ  
տպագիր Դանձարանք: Հմմտ. նաև Ս. Կանայեանցի  
կազմած Յուցակ հայ. ձեռ. Ներսիս. հոգ. գպրա-  
նոցի (Թիֆլիս, 1893, էջ 11—16) հետաքրքրա-  
կան Դանձարանը՝ 1505 թուին գրուած: Սակայն  
աւելի լիակատար է վերոյիշեալ Վենետիկեան գլր-  
չագիրը, որի մէջ կան պահուած Խլաթեցու 41  
գանձերը:

5. Դանձ ճեղնալրութեան (տպ. Գիրք Զեռն.  
Կ. Պօլիս, 1752.):

6. «Վասն Մովսիսի Դրոցն»—Մեկնութիւն  
Արարածոց—որ բաւական ընդարձակ ճառ է՝ հե-  
տեղութեամբ Բարսղի Վեցօրէից, Արիստոտելի,  
Ականց գրոց և Վարդանալ Մեկնութեան գրուած  
և հետաքրքրական լեզուի կողմից:

7. «Վասն Յեսուայ» (Հատուած):

8. «Խրատ ժամատեղաց ըստ արևելեան սահ-  
մանաց և սկսուածոց և ասութեան աղաւթիցն,

զոր խնդրեալ ս. վարդապետն Յակոբ Ղրիմեցին ի  
մեծ բարունուցն Դրիգորէ Խլաթեցոյ»:

9. Ժառ ի ծնունդ ս. Աստուածածնի; 5

10. Նեղրահղ տարեւորական տեղեաց:

11. «Խնտաստամ կամ որոշումն վասն խնդրոյ  
իրիք պամկի՝ այն է թուղթն նորա (Խլաթեցոյ)  
առ ոմն»: (Չեռ. Ծուցակ Վենետիկ. ս. Ղազարի  
գրչադ.):

12. «Թուղթը» Խլաթեցոյ: (Անդ.):

13. Մանաւանդ արժանիք ուշադրութեան  
Խլաթեցու խմբագրած «Յայսմաւորը» իւր ժա-  
մանակ նահատակուած վկաների պատմութիւննեով  
հանդերձ. «զգիրս սրբոց մարտիրոսաց և վկայիցն,  
ասում է Մեծոփեցին մեր հեղինակի մասին որ  
կոչի Յայսմաւորց շարադրեալ ի սրբոց հնոց և  
նորոց վարդապետացն՝ ի լոյս էած »: Այս նոյն երկն  
է, որ ինչ ինչ յետսամուտ յաւելուածներով տը-  
պագրուեց երկու անգամ կ. Պօլիս. (1706 և  
1730 թթ.) և մինչև այժմ ևս զործ է ածութամ.

3. Այս ժառի յաջորդ ներողի, որպէս եւ Խլաթե-  
ցու Տաղերն ու Գանձերն ամփոփող վերը յեշած Վե-  
նետիկեան լիակատար գրչագը մասին հաղորդել է ինձ  
սիրայօժար Արժ. հ. Յակոբոս Տաշեանը, որին յայտ-  
նում եմ այսու իմ ջերմ չնորհակալութիւնս:

շատ տեղ չայ եկեղեցիներում, ուր դեռ մուտ չէ գործել Պօլսի վերջին (1834)՝ աւելի կատարեալ հրատարակութիւնը՝ յայտնի Տէր հսրայէլի խըմ-քաղաքած օրինակից:

14. Խլաթեցու վերոյիշեալ երկրասիրութիւն-ների վերայ աւելացնելու է և մինչեւ այժմ մի քանի կարծ հատուածներով միայն ծանօթ ներկայ «Յիշատակարան Ազէտից»,<sup>4</sup> որ գուցէ Զամշեանի (Դ. 451) յիշած «Պատմութիւն վկայից նահատակելոց ի ժամանակս իւր» զրուածքը լինի: Սա

4. Այս գրուածքից բարսրովին ապաբեր է Գրիգորի (հաւանականորէն՝ Խլաթեցու) մի ծաղը. «Եկայր ողբասցուք, — Եղբարք զշարութիւն — և զգի նետողաց... եւ այլն. (Տե՛ս Ցուցակ հայ. ձեռագ. ներսիս. Հոգ. Պալրանոցի, էջ 15) որպէս եւ «Ճռաքաղի» 1861թ. օգոստ. — սեպականք. համարում Գրիգոր Երիցու նոյնակէս «Յիշատակարան» կոչուած «Տունըս թուով հարիւր եւ քսան», բայց աւելի ճիշտ 256 տող՝ աւելի կրօնական, քան պատմական տուանաւորը՝ 1335թ.՝ գրուած, որ ասել է՝ թէ ոչ մի կերպ Խլաթեցու գործը չէ կարող լինել; — Մեր «Յիշատակարանից» մի քանի համառօտ հաստուածներ կան բերած միջամէջ վերը յիշած Վեւոնդի, Փիքուալէմեանի «Նօտարք Հայոց» գրուածքում — էջ 5, 36 եւ 47՝ ընդամէնը 33 տող եւ Հ. Վեւոնդ Ալիշանի «Այրաբատում» — էջ 323—325՝ ընդամէնը 77 տող:

460 տողից բաղկացած մի չափաբան պատմութիւն  
է, որ մենք Պատմական վիպասանութիւն անուա-  
նեցինք և որը ամփոփում է իւր մէջ Հանկթա-  
մուրի և այլ բռնակալների օրով՝ 1386—1422  
թուերին Հայաստան տեղի ունեցած զարհուրելի  
կոտորածների և տառապանքների տխուր անցքերը՝  
ժամանակակից երբեմն նաև ականատես մատենագրի  
Ճշմարտապատում և սրտաշարժ նկարագրութեամբ։  
Զը նայած իւր չափաբերական ձեին և բանաստեղ-  
ծական պարագաներին՝ այս երկը պատմական մեծ  
արժեք ունի ի միջի այլոց և այն պատճառով, որ  
նա նոյն ժամանակի պատմագիր Թումա Մեծոփե-  
ցուց աւելի վաղ է գրուած և տեղ տեղ գեղեցիկ  
կերպով ստուգում ու լրացնում է սորան։

Մեր վիպասանութիւնը պահպանուել է Ար-  
դուին քաղաքի Հուսաւորչայ Հայոց եկեղեցում  
գտնուած բոլորագիր գրչագիր ձայնքաղ Գանձարանի  
մէջ՝ յիշատակարանի վերջը, որից իմացուում է,  
որ գրչագիրը դրուած է Վան քաղաքում՝ Հայոց  
ՃԾԱ = 1462 թուին — ուրեմն Խլաթեցու մահից  
37 տարի յետոյ։ Ես ընդօրինակել եմ տուել այս  
դրուածքը յիշատակի արժանի հանգուցեալ Գրի-  
գորիս Արքեպիսկոպոս Ազուանեանցի 1886 թ. ինձ  
ուղարկած «Տոմար արձանագրութեան» մի տես-

բակից, որ արտագրուած էր Կարսի առաջնորդաբանի քարտուղար պ. Խ. Դարբինեանի ձեռքով։ Յ

Եղս ընծայելով այս վիպասանական երկը՝ մենք ի նկատի ունինք ոչ այնչափ նորա բանաստեղծական և գեղարուեստական կատարելութիւնները, որովհետեւ նա արգարեւ միջակ գրուածք է՝ միջակ ոճով յօրինուած, — որչափ նորա պատմական բովանդակութիւնը և մանաւանդ նորա ընդհանուր տրամադրութիւնը և ոգին, որ այնպէս ժամանակակից են և զուգագեպ մեր ներկայ անմիջիթար վիճակին . . . :

«Յիշատակարանն Աղէտից» հրատարակում ենք ամբողջութեամբ և անփոփոխ՝ բոլորովին համաձայն մեր զրչագիր օրինակին, բնագրի միայն այլազգի բառերը նոտրազրով նշանակելով և նորա տողերի թիւը որոշելու համար արաբական թուա-

5. Այդ տետրակը իւր ժամանակին ապահովութեամբ վերադարձել եմ ես Գրեգորիս արքեպիսկոպոսին. իսկ իւր սեպհական ձեռագիր աշխատութիւնը՝ «Ստորագրութիւն Կարսի շրջակայ գիւղօրէից եւ վանօրէից 1878», — որ ինքը հանգուցեալ սրբազանը յանձնել էր ինձ տպագրելու ըստ իմ հայեցողութեան, լոյտ կը տեսնի շուտով Բարձրագոյն հաստատուած Մ. Էմիմի Ազգագրական ժողովածուի մէջ։

ՀՅՈՒԱՆԻԿԵՐԵՆ ԵԳԻՑԻՑ

ト フ ハ テ ル レ ベ リ ノ ド ロ ネ

200 Առաջին է

## ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ,

ՈՐ ՄԱԿԱՆՈՒՆ ԾԵՐԵՆՅ ԿՈՉԻ ԽԼԱԹԵՑԻ ».

**Ի** յութ հարիւլ Հայոց թուական  
Ըսդորս և հինգ եօթն յաւելան (1386թ.),  
Յունուարի մին պահք Յայտնութեան  
Հոյս արեւուն խաւարեցան:

Յ Մեծ վարդապետն անուն Յոհան,  
Որ և Կախիկ անուն Ճնշնդեան,  
Յետ վեց աւուրն Խառարման.

7. Թովմա Մեծոփեցին (Էջ 15) անորոշ է աւանդության արման մասին. «Եւ ի տիյն աւուրս հանգեաւ է Քրիստոս (Յօհանն վ.) Եւ ինաւրում Եղեւ աշխարհիս Հայոց»:

Փոխի առ Տէրն իւր անժամական:  
ի սոյն աւուրս դառնութեան

10 Ծրագալուցի աւր Յայտնութեան  
Մեծ պատուհաս ի Շահաստան  
Բարբարոսաց ազգէն հասան:  
Արքայն Հոնաց Թուխթամիշ խան  
Զաւրս առաքեաց ի Պարսկաստան,

15 Որ եկն արար առ և Թախտան  
Մինչև յերկիրն Հայաստան,  
Հինգն Յունուարի Թափրէզ մըտան,  
ի քսան և ինն ի Նախչըրւան,  
Անտի գնացին դէպի Մուղան,

20 Դարձան յաշխարհն իւրեանց բնական+  
Զառ և զաւար ընդ ինքեանս աարան,  
Մըտին յաշխարհըն Հոնական,

մաժելուալի գշար մի իրաւունք  
լացմայաւայ մրալիս պալ

8. Չամշեան (Գ. 450) Յոհան Կախիկի կամ Որոտ-  
նեցու մահը գնում է 1388 թ., Ալիշան («Սիսական»,  
220) 1385 կամ 1386 թ.; — «Անժամական» — այսպէս մեր  
օր. Փիրդակեմեանի օր. («Խօտարք», էջ 36) ունի....առ-  
տէրն իւր անձկական:

15. Թախտան Պարսկ. բառ=աւաբառութիւն:  
17—18. Փամանակագրական այս մանր որսչումը  
ները չէ յեշում թ. Մեծ. (էջ 14):

Անթիւ վեասէր գործեցան.

Ի դալ նոցա մինչև դարձան

25 Բազմաց արիւնը յերկիր հեղան,

Եւ շատք ի ձիւնն մրսեցան,

Բազումք յահէ նոցին փախեան

Եւ [ի] նըզմունս սատակեցան.

Մարք ըզտղայոց գութ մոռացան,

30 ծնաւղք մանկանց գահիճ եղան.

Շատք ի սրոյ նոցին մեռան

Եւ այլ բազումք չարչարեցան

Ընտ ընտ այս գործըս չարին

Եւ ընտ կորուստ հայաստանին

55 Եհաս միւս այլ հարուած կրկին

Եւ դառնագոյն քան զառաջին:

Մինչդեռ ի նոյն էաք սըզին,

Եկեալ եհաս մեզ ձայն գուժին,

Թէ շարժեցաւ տուն Խորազմին,

23. Եյս տողի մէջ թուում է թէ մի վանկ պակաս է. արդեօք սպասելու չէ՞ր—«Անթիւ վնաս էր որ գործեցան»:

28. Մեր օրինակում «Եւ նըզմունս»՝ որ մենք ուղղեցինք «Եւ ի նըզմունս»—համաձայն քերականութեան եւ լանկերի չափին:—33. «Ընտ ընտ»—այսպէս մեր օր. արդեօք՝ ընտնաս եւ կամ թերես՝ Եւ ընտ....:

40 Առհասարակ ցեղ թաթարին,  
Ժառանգաւոլք Սըմըրդընդին,  
Աւտար որդիքն Աբրահամին—  
Միահաղոյն յաշխարհս մըտին,  
Յաթոռս Ատըրապատականին,

45 Առին աւար և գերեցին  
Զազգս Պարսից և Հայ զարմին:  
Տապակեցին, յատակեցին,  
Անխայաբար խոցոտեցին,  
Զարըս սրոյ ճարտակ տուին

50 Եւ ըզկանայսն գերեցին.  
Զոմանց գլուխարն քերթէին,  
Հանդերձ հերաւքն խըլէին,  
Զայլոց զշունչսն արգելուին  
Եւ հեղձամահըս խեզդէին.

55 Որպէս զոչխարըս մարթէին,  
Փոկս ի թիկանցն հանէին.  
Զկէսըս հըրով խորովէին  
Եւ ճենձերովքըն ցնծային.

60 Եւ ըզՄահմետ գաւանէին,  
Եւ ընտ գաւառ Այրարանին  
Մըտին յաշխարհըն յԱզւանին.  
Զարքայանիստ քաղաքն առին,

Որում ծըփիսիսըն կոչէին.

65 Զարքայն Բագրատ ըղվլրացին

և հաւատոյն ուրացուցին:

Անտի անդրէն դարձ արարին

Եւ ի Մուղան ձմեռնեցին:

Ապա յաւուրս գարնանային

70 Դարձ ի Սիւնիս Մեծն արարին,

ԸզՈրոտայն գղեակն առին,

Մինչեւ ի Կարս արշաւեցին

Զերկիրըս ամէն չալ արարին

և յանցանելն երթեւեկին:

75 Զի յետ գարձան և կրկնեցին

Երրորդ անգամ չորբորդեցին,

Որոյ անուն գլխաւորին

Էր Լանկ Թամուր չարեաց գընդին:

Այս էր ի թիւ ութհարիւրին

80 Եւ երեսուն և վեց ամին. (1837թ.)

Զամուր տեղոն յաւար առին

Եւ շատ ոճիրըս գործեցին.

85 Յորոց և մի էր և Բըջնին,

Որ էր աթոռ երկուց պետին.

85 Զոր առին և քանդեցին

Զեպիսկոպոսն սպաննեցին:

Այլ և զհասանըն ծարեցին:

Երեք որդւովքըն սպաննեցին:

Զի ըգնոցին ամուրն առին:

90 Եւ չորս հարիւր անդէն սպանին:

Եւ յերեան մեծ աւանին:

Արս հինգհարիւր կոտորեցին:

Չունիմ ասել քան զոր կրեցին:

Քրիստոնէից ազգ Հայ զարմին:

95 Դողան ոսկերքս և սաւառնին:

Լոյս իմ քաղի, սիրոըս ճըմին:

Քանզի աշաւք իմ տեսանին:

Ողորմազին հարուած սոցին:

Իշխանք բազումք ի տանց ելին:

100 Եւ ի յընչից պարապեցին:

Յերիւարացըն զըրկեցին:

Եւ հետիոտըս տանէին:

86. Բջնոյ եպիսկոպոսը՝ ըստ Մեծոփեցու (Էջ 19), էր Վանականը (Զամբ. Գ. 422 ունի՝ Տէր Վանակ):

87. Հասան իշխաննին չէ յեշում Թ. Մեծոփեցին:

91. «Երեւան մեծ աւանն» եւս չկայ Մեծոփեցու մօտ:

95. «Սաւառնին»—այսպէս մեր օր. արգեօք՝ սարպին եւ կամ՝ սարսափին:

- Ծըղայքն ի մէջ ճանապարհին  
Յոչ ի կարել գնալ՝ մեռանին,  
405 Եւ կրտւնաւորք վանականին  
Մոլորելով՝ յարկ ոչ գըտին.  
Որք ի կանայս ոչ նայեին՝  
Հարկին ի մէջ նոցա մտին:  
Կարաւան հացի մերկ շրջեին,  
410 Եւ բոկ ուամբք հետեւեին:  
Պատիւ շը կայր պատուականին,  
Եւ ոչ նըշան ունեւորին:  
Զը կայր ոչ հաց հացաբաշխին,  
Եւ ոչ գինի զինարրուին:  
415 Զը կայր ոչ ձի ձիաւորին,  
Եւ ոչ տըրեխ հետեւակին:  
Աւամբք յաւտարըս շրջեին  
Եւ կերակուրա մուրանային:  
Տիկնայք որ ճոխ տունս ունեին  
420 Եւ մետաքսաւք պերճանային,—  
Հայակաբաւաւոր եղեւեին,  
Ճածկոյթ անձանցըն խնդրեին.  
Իշխանք, որ պետք անուանեին  
Եւ արծաթով յըդփանային,  
425 Աղքատացեալլք լինեին  
Եւ կերակրոց կարաւաեին:

- Եւ որք բազմաց հացըս տային՝  
Մին պատառոյ ակն ունէին.  
Թէպէտել յոյժ ամաչէին,  
  
430 Այլ ի կարեացըն լրբէին,  
Թէև մուրալ պատկառէին,  
Այլ ի սօվոյն յանդգնէին,  
ծիւրեալք ի ցաւս ախտանային  
Աւն անդր և աստ մեռանէին.  
  
435 Մանկունքն ի մարսըն նայէին,  
Միթէ կենաց հընարս առնէին,  
Մարքն ի գթոյն խորովէին,  
Արագ ըզկեանս վճարէին,  
Հարքն ի գորով տղայոց լային,  
  
440 Ազիողորմն վայէին  
ի տեսանելն զոր սընուցին  
Դառըն կարեաւքն ցաւագին,  
ի մեռանել մանկանց նոցին  
Ինքեանք հոգիքն քաղէին:  
  
445 Կիսոց չը կայր ոք որ լային  
ի՞ ոչ գերեզմանս ճանաչէին,  
Եւ այսպիսի ողորմագին  
Այս տեսողացն երեւէին,  
Այս ոչ միայն քրիստոնէից,  
  
450 Այլ ի Տաճիկ ազգաց բնաւին

Զի հասարակ էր նեղութիւն

Պարսից ազգին, Հայ և Թուրքին:

Եւ այս ամէն յայնկոյս գետին:

Որ յԵրասխայ անուն կոչի[ն].

455 Իսկ յանցանելն յայսկոյս գետին,

Եւ յարշտւելն ըգչետ Թուրքին

Մինչև յԱմթայ ջռւրն հասին,

Բազում ոճիրըս դործեցին:

Անտի դարձան ի Հայք ելին

460 Եւ ի վերայ Վանայ եկին:

Պատեցին, պաշարեցին

Զամուր գղեակն յաւար առին,

ԶՀայ և զՅաճիկսըն կապեցին

Եւ ի քարանցն հոսեցին.

465 Այնքան հարին, սատակեցին,

Մինչ մըսագէզ անդ արարին:

Այլ և զամուրն Երնջակին

Թողում ասել զանցս նորին,

Որ ի յաւուրց Աւագ Զատկին

167—172. Երնջակի պաշարման ժամանակին վերաբերեալ մանրամասնութիւնները պակասում են թ. Սեծովիեցու մօտ (էջ 17). Իսկ Զամչեանի պատմածը (Գ. 421) հակառակ է Խլաթեցու հաղորդածին:

- 470 Մինչև ի տառն Սըրբոյ իւաշին  
ծանր զաւրտոք պաշարեցին.  
Բայց վընասել ոչ կարացին:  
Ապս յետոյ դարձ արարին  
Յաշխարհն իւրեանց ուստի եկին:
- 475 Դարձեալ կրկին ի դուրս եկին  
ի քառասուն և՝ երկու ամին  
ի Բարելոն արշաւեցին  
ի՝ ի Միջագետս կոխեցին,  
ԶՈՒՐՀԱ քաղաքըն պանծալին
- 480 Եւ ըզմիթ երկելին,  
ԶՄԵՐԹԻՆ ամօնը և զՆըսերին—  
Զորս բնաջինջ գերեցուցին:  
Եւ զայլ բազում քաղաքանին,  
Զորս քանդեցին, աւերեցին:
- 485 Անտի դարձան յաշխարհս վերին  
Մինչև յԱՆԻԿ արշաւեցին,  
Զոր և Զանիւ մեծու առին,

- 
176. Այսինքն Հայոց 842. թուին=1393. թ. ՄԵ-  
ծոփեցին (էջ 44) 844=1395 թուականին է գնում  
Լանկ Թամմութի երկրորդ արշաւանքը: 271—701
181. Նըսերին=ՄՃՐԻՆ: Այսունական յանդայ  
պիսին 184. Փիրդայիմաօր Զորս քանդեցին և գերե-  
ցին: : այնու բայրութ այս կոյսի չ լին ուսմա՞ (121. -?)

Եւ զՄսըրըն դերեցին:

Անտի դարձեալ յետ գնացին

190 Եւ զաւրս թողին յԵրնջակին.

Տասնուհինգ ամ խըսարեցին

Զրերդն Երնջակ՝ ապա առին:

Զթողում ասել զդործ անարին

Զվատթարհանդէս Վրաց արքային,

Որ եկն արար վատ յաղթութիւն

Զզաւրսն փախոյց ըզՉաղաթին,

Որ պաշարեալ խըսարէին

Զամուր զզեակն Երնջակին:

Անտի հհան զլսանի որդին

200 ԶՄուլթան Տախիրն յԵրնջակին.

Տարտւ առ իւր և զաւրացոյց

191. Երնջակի պաշարովն էր Ասնկ Թամուրի որդե  
Միրան Շահ Հաղաթան (Թ. Մէծ. էջ 71). փոխանակ  
«տասնուհինգ ամ», որ չէ յեշում Մեծովիեցին, Ալբ-  
շանի («Սիսական», 364)՝ ըստ իս՝ աւելի ուղիղ «ընդ-  
երկար ամիս» է պնում; — Խըսարել=պաշարել:

200. Երնջակի Թիր կամ Դաներ և կամ Տահիր  
(Տախիր կամ Տայիր) Սուլթանը Բաղդատու թագաւոր  
Ահմէտ կամ Ահմատ խանի որդին էր, իսկ Ահմատ—  
Այշեխուր Սուլթանի կամ Շէլս Վէջիս խանի որդին:  
(Զամէտ. Գ. 357, Ալիշան, «Սիսական», Անդ.):

201. «առ իւր» այն է՝ ի Տիխիտ:

- Եւ ետ տանել Ահմատ Խանին։  
Եւ ի գնալ չար զաւակին՝  
Ապստամբեաց ընդդէմ խանին օթէ  
205 Սուլթան Ահմատ թագաւորին,  
Որ էր որդի Խանոյիսին.  
Ոչ աջողեալ այն անբախտին  
Սուլթան Տահիր որդւոյ խանին.  
Զի հայրանենգ եղեալ չարին օթէ  
210 Հետըն տարաւ ի Բաղդադին։  
Խոկ ի լըսել Լանկ Թամուրին,  
Զոր ինչ արար արքայն Վրացին,  
Ի բարկութիւն շարժեալ կրկին  
Հանդէս արար իւր հեծելին։ օթէ  
215 Այլ բազմութեամբ քան զառաջինն  
Ի գուրս եկեալ Թամուր բէկին  
Յամուրսն եմուտ Վրաց առնին, օթէ  
Արար գերի զամենեսին։ օթէ մայդան  
Անտի գնաց մինչ ի Զըմիւրին  
220 Քազաք Լիկեայ ծովեկերին։ օթէ  
Զարսըն կոխեալ զիլդրումին։ օթէ  
206. Այսինքն՝ Խան Վեյսին, որ վերոյեշեալ Շէլա  
Աէլիս խանն է։  
221. Նոյնն է, որին Թ. Մէծոփեցին (էջ 65)  
«Խոնդքեար Ելտրումի» (կայծակ) է կոչում այն է՝  
Օսմանցոց Սուլթան Բայազիտը։

ԶՀԿԱՒՐ յաղթող մեծ սուլռանին  
ԶՂԱՐԱՅ թաթարս այլ ընդ նմին  
ԳԵՐԻ տարաւ զամենեսին:

225 Որոց ոչ էր թիւ համարին  
Կոտորելոց զորս գերեցին  
Ի տուն ժամբաց կապագովկին,  
Որ ՄԷջերկրեայ Հռոոմք ասին:

250 Արանց կանանց և ընդ մանկտին,  
Զարսն թողեալ մինչ կենդանին,  
Հողով ջրովըն հեղձուցին:  
Իսկ ըզմատաղ տղայ մանկտին  
Զայն կալոտիս ձիոցն արկին:

255 Իսկ յիջանել Միր Թամուրին  
Ի շահաստան Դամասկոսին՝  
Ծով ու ցամաք սասանեցին  
Վասըն լըրոյ չար համբաւին.

Զորս սըրոյ ճարակ տային:

240 Եւ զորս բոցով հրոյ այրեին:  
Եւ ըզգլուխն զոր կըտրեին:  
Զայնս մըներայս յաւրինէին:

242\* մըներայս որ է մինարայս=աշտարակ:

Եւ յոյսպիսի չար համբաւին

Աշխարհ ամեն սառանեցին:

245 Զայս արտրեալ Միր Թամուրին

Դարձաւ յաթոռ Սըմըրդինդին.

Եւ անդ եհսոս աւք վախճանին,

Սատակեցաւ յիւր աթոռին:

Իսկ Միրան Շայ որդի նորին

250 Եկեալ ե թակլթն Թաւրիզին,

Որոյ ընդգէմ կացեալ նորին

Նարա Ռւսուֆ բախաղուրին

Էհար զզաւրսն Զաղաթին

Եւ առ զզուին Միրան Շային.

255 Թագաւորեաց ի նոյն թակլթին

Թաւրէժ քաղաք շահաստանին:

Արար բազում խաղաղութիւն

միջ ճամասա զանազ առ խօս

252. Նարա Ռւսուֆ որ և Միր Ռւսուֆ և Ռւսուֆ  
քէկ՝ Սասնոյ իշխեցող Մարաց ամիրան էր, որին Թ.  
Մեծովիեցին լոկ Յուսուփի է անուանում: Բախաղուր  
կամ Բահադուր Թաթար. ըստ է և նշանակում է քաջ  
կամ դիւցազն:

254. Ալիշանի օր («Այրարատ», 323) ունի «Հառ  
զգլուխն...»:

256. Ալիշանի օր ունի այս տողը նախընթացեց  
առաջ:

- Եւ յաջողումն մարդկային,  
Հրեմնութիւն և էժնութիւն,  
260 Ամենեին անգողութիւն,  
Իսկ յաճախել մեզաց ախախն  
Մարդկան ազգիս քրիստոնէին  
Եղել գնալ խան Ռւսութիւն  
ՅԱԽՐԾԸԽՆԵ քաղաք Վրացին,  
265 Արար դազայ և գերութիւն  
Անթիւ վնաս և չարութիւն:  
Այս էր ի թիւ ութ հարիւրին,  
Այլ և վաթսուն և հինգ ամին (1416 թ.):  
270 Իսկ զգերխալն զոր առին  
Յաւար երկիր վրաարեցին.  
Բազգատ ի Մըսըս հասուցին  
և ի յորասան Պարսկաց տանին:  
Ոչ մին հազար կամ հինգ վեցին,  
Այլ քան բզրիւրն էր աւելին  
275 Նոյն սպաննելոցն էր բազմութիւն  
Եւ անհամար որ ոչ թըւին:  
Իսկ ի յամի ութ հարիւրին  
և եւթանասուն թըւականին (1421)  
Դարայ Ռւսութ տէրըն թափթին

- 280 Սատակեցաւ ըստ արժանին,  
Խաղը, խայտառակ որպէս տեսին,  
Անկեալ յերկիր մարմին պղծին,  
Զի շփոթեցաւ զաւրքն չարին  
Եւ յիրերաց փախուստ առին:  
285 Ուռեալ նեխաւ գէց գարշելին,  
Ազռաւը հանին զաշեր նորին:  
Խոկ յետ երից աւուրց եկին,  
Բարձին զգէշն և թաղեցին:  
Խոկ զաւրք չարին Միր Ուսուֆին  
290 Հնդ որ գնացին՝ աւերեցին.  
Զար, անզգամ մարդիկ էին,  
Եւ անասախ ազգ թուրքմանին.  
Հնդ մեռանել Ուսուֆ բէկին  
Զաւրք Զաղաթին եկին հասին.  
295 Որոց գըլուխ և առաջին  
Էր Շախ Ռուհ անուն նորին:  
Էր նա որդի Միր թամուրին  
Կըլսեր եղբայր Միրան Շային.  
Զաւրքն բազում քան վթամուրին,  

---

286. Ալիշանի օր «զազիր նորին», որ ազաւաղ ըն-  
թերցուած է:  
292. Անասախ թաթար. բառ=անիբաւ: Ալիշանի  
օր «անառակ ազգ», որ անյաջող սրբագրութիւն է:

1301

500 Այլ աւելի քան զնոսին:

Հինգ բիւր՝ որ է յիսուն հազար,  
Եր սորա զաւրքն ընդ նոյն համար.  
Զի երեսուն էր թամուրին  
Ի՞ այլ աւելի քան ըզնոսին:

505 Բայց ոչ ունէր սա չարութիւն,

Այլ բարեսէր հանդարտութիւն:  
Յորմէ սարսկան ազդ թուրքմանին  
Վասն իւր չարեացըն զոր ունին.  
Զի անողորմ էր և անիրաւ,

510 Անմըրաթ և անշաղաւաթ,

Անդատաստան և անհաւատ,  
Պիղծ, չարագործ իսկ և տըմարդ,  
Անպատկառ և անամաւթ,

Մեղաց աման, չօրեաց անաւթ:

515 Փառք Աստուծոյ զոր ինչ արար

Ընդ թուրքմանին չարեացն յարմար.  
Քանզի խըրան նախ և փախեան

307. «Սարսկան»—այսպէս մեր օր. թերես՝ սար-  
սկան:

310. Երկու արար, բառեր հայ ան բացասակա-  
նով. գոցանից առաջնը նշանակում է անագորոյն,  
անգութ, և երկորդը՝ անսիրա, անխիղճ:

317. «Խըրան»—այսպէս մեր օր. արգեօք՝ իւրանան:

- Եւ յետ դարձան կոտորեցան։  
Հստ արժանեացն ի ձեռք անկան  
520 Շահը լուխին և մատնեցան։  
Շատք ի սըրոյ նոցա մեռան  
ի՞ այլքըն փախեան և գերեցան,  
Կողոպտեցան և գերեցան,  
Զիոց կոխան սատակեցան,  
Խաղք խայտառակ թալանեցան,  
ի սար և ի ձոր փախըստական։  
Ընդ որ փախեան՝ հալածեցան  
ի՞ ինքեանք միմեանց դաշիճ դարձան,  
Անթիւ ըոգակ էր զոր տարան,  
530 Աղէկ ձիան և շատ ուղտան։  
Կին և տըղայքն ի թիւ չանկան  
Զոր գերեցան և կոխեցան։  
Բայց ողորմած և խըղճական  
Նա սիրտ ունէր Շահը լուչն այն։  
535 Ասակ արար խուքմ և հրաման  
Ոչ կորուսել զամենեսեան,  
Այլ թոյլ ետուր որ ցըրուեցան,  
ի՞ աւտար երկիր վըտարեցան։  
329. «**Ըստակ**»=աւար;  
335. «**Ասակ**» կամ խասակ թաթար. բառ. —օտ-  
բէնք, իրաւունք. —«խուքմ»=պատուէր։

Եւ Շահընուշ՝ այն մեծ սուլտան

540 Գրնաց գարձաւ ի խորասան,

Դրնաց յաթոռն իւր բընական,

ի Սամըրդանդ հայրենական,

Զթախմթլն թողեալ ըզշահաստան՝

Անտէր թաւրէզ քաղաքըն դայն:

545 Ապա որդիք Ուսուֆ Բէկին

Եկեալ թախմթին այն տիրեցին.

Բայց ինքեանք ոչ բարիշեցին,

Այլ մին զմիւսըն փախուցին:

Իսկ անիծեալն ամենեին

550 Կըրսեր որդի Միր Ուսուֆին՝

ՀՍպանդիարն անաւթ չարին,

Լիրք, անզգամ, յիմար հոգին,

Եր վնասակար և աւերող

Շատ բարելի շէն գաւառնին—

555 ԶԱրձէշ և զԱրձկէ աւերեց,

ԶԲասեն և զԱւնիկըն քակեց,

ԶԿարնոյ քաղաքըն զԱռզըռում.

Քան զամենայն խիստ աւերեց:

Իսկ իսքանդար աւագ որդին

---

351. Թ. Մէծովեցին (Էջ 79 . . .) պոլանակ «Սպանդիարի», միշտ Ասպահան է կոչում Ուսուֆի կըրտսեր որդուն:

560 Հարայ Ռւսումք բախտպուլին—

Նա ի Թաւրէզ տիրեաց թախթին  
Ի՝ առախ արար շատ բարութիւն:  
Բայց մեզ աւար ած և խառ ար  
Եւ չարութիւն գտան և զըժար:

565 Խեծել արար շատ բազմութիւն

Ի՝ եկն ի վերայ Խլաթայ բերդին:  
Բերդին վնասել ոչ կտրացին,

Այլ գքաղաքըն այրեցին.

Ի յԱզուանք արշաւեցին

570 Եւ չար լւազայ անդ արարին:

Ըզբերգն առին, կոտորեցին.

Շատ քրիստոնեայք անդէն սպանին,

Քան զերկերիւրն այլ աւելի,

Զոր անդ ի սուրբն քարշեցին,

575 Թող զորս ի ծովըն խեղդեցան,

Եւ քարավիժ եղեալ կորեան:

Ո՛չ, գեղեցիկ կերպ ու սուրամթ

---

365. «Խեծել» նոյն է՝ հեծել՝ հեծեալ, հեծեալ  
զօրք: Ավշ. օք. «հեծել»:

369. «Ազուվանք» բերդը պէտք է եղած լինի  
Խլաթի մօտերքը՝ թերես սորա և Շղակ գիւղի միջև,  
իսկ Ազուվանք գաւառի Ազայ կամ Ազու գիւղը, որ  
յիշում է Թ. Մեծոփեցին (Էջ 92), կարծեմ որ տար-  
բեր է սորանից:

Այն մանկտեկացն որ կորուսան.

Լաւ հարկեւոր տանուտիւայք,

580 Համեստ և՝ աղւոր տանտիկընայք,

Բարձրահասակ և՝ աղէկ տեսակ

Գուն ու կերպօվ ճռիս կըտըրձակ,

Այս ամենայն ի սուբ անցան,

Գերեզմանի չարժանացան,

585 Կանայք տղայաւքըն գերեցան,

Քան զշինգ հարիւրն այլ աւելան.

Զի ի միոյ գեղջէ չէին,

Այլ ի բազում տեղաց էին,

Ի չիզանայ և՝ ի թաղիշոյ,

590 Որք հասկաքաղ եկեալ էին,

Ծըղաք և՝ Աղաղ ամենեին,

Շատք յԱղիթայ անդէն էին,

389. «Հիզան» որ և Խիզան:

391. Այս գեւզերը մինչև այժմ կեցած են Պա-

նայ Ծովի ափին՝ Դատվանի և Խլաթի միջնէ: Հմմտ.

Ն. Մազիսկանի Տեղագր. և վորք. և ի Մեծ Հայս, էջ

275 և Միշախունամի. Նկարագր. Ուղեոր. Ա. էջ 85—86:

392. «ՅԱղիթայ»—այսպէս իմ օրինակում. բայց

Աղէր կամ Աղիթ գիւղ ես ըս կարտղացայ գտնել Խլաթի

շըջակայքում: Արդեօք Ս'ի և Ա'ի շփոթութիւն չէ

այստեղ և յԱղիթայ (կամ յԱղիսայ) կարգալու չէ,

որպիսի (Աղիտ) գիւղ արդարեւ գոյսոթիւն ունի Խլաթի

Որք ի սուբն քարշեցան։  
Կանայք որդւովքն գերեցան։  
595 Այս ամենայնի պատճառ է այն  
Շամըզըդին ամիրային,  
Զար սատանին արբանեկի  
Եւ ի նեռին կարապետէ,  
Որ նա արար հպարտութիւն,  
400 Զհնազանդեցաւ հսքանդարին։  
Շատք որ սպան և՝ անթաղ մնացին,  
Ոչ հաց հոգւոյ ոչ զրամ թողին։  
Եւ որք գերի վարեալ գնացին,  
Յաւտար երկիր վրտարեցին։  
405 Ի յայլազգին խառնակեցան,  
Ըզարութիւն նոցա ուսան։

---

մօտեցք և յատկապէս Ռզակի և Ազաղի մօտ։ Հմմտ։  
Միրախորեան, Անդ։ «յԱղեթայ» ունի և Աղջ. օր։ Վե-  
րոբերեալ երեք զիւղերից Թ. Մեծովեցին միայն Ռզակին  
է յիշում։

395. Աղիշանի օր. «Այս ամենայն ի պատճառէ  
Այն Շամըզտին ամիրայէ»։

396. «Շամըզդին»—այսպէս իմ օրինակում։ կար-  
գալու չ Շամըզին, որ Բաղիշու Շամշատին ամիրան  
էր։ Թ. Մեծ. էջ. 83։

401. Աղիշանի օր. «Շատք ոք լսալան»։ Ա յանուա-  
402. Աղիշանի օր. ոչ ոչ դրսո՞ հոդին։ Դ յանուա-

- Աւտարացան և յոռացան,  
Հզհայրենիսըն մոռացան,  
Պըղծեցան և գարշեցան,
- 410 Աղտեղացան և զաղրացան,  
Ոչ ի կամաց, այլ յակամայ  
Հանդիպեցան այս դարք նոցա:  
Միթէ Աստուածն քաղցրանայ  
Եւ աղատէ անտի զնոսաւ
- 415 Ոլք հանդիպիք այս երգակիս,  
Զիս յիշեցէք ըզեղկելիս—  
Զմրափած Գրիգոր Խլաթացիս,  
Ոլ սպասաւոր կոչիմ բանիս,  
Եւ սիսալանաց շարագրիս—
- 420 Անմեղադիր լերուք անձինս,  
Ոլ գրէի ըզբան ողբիս  
Եւ կըսկըծայր սիրտս ի փորիս.  
Ոչ հանդուրժեալ մըտաց խըղճիս,  
Զոր գըրեցի ես ի քարտիս:
- 425 Քանզի ի մէջ էաք շարիս,  
Ոլ եկն եհաս մեր աշխարհիս,  
Եւս առաւել մերում ազգիս,  
Այս տառապեալ Հայոց տոհմիս՝
- Անուամբ միայն քրիոտոնէիս,  
430 Գործոց դատարկ ամբարըշտիս,

Սուրբ աւրինաց հակառակիս,  
Բարիատեաց չարասիրիս,  
Եմք անազաւթք հեղգ ի բարիս,  
Անապաշաւ խըզձամբտիս,  
455 Ծոյլ և պղերդ յամեն բարիս,  
Ի' անկարեկից յայլոց կարիս,  
Յիշոցնաատ ոչինչ բանիս,  
Ի' երդբնազանց ևս ի անոտիս,  
Բախիլ յաշաղ յայլոց բարիս  
440 Եւ նախանձոտ առ ընկերիս,  
Քինախընդիր չարաճըճիս  
Եւ բամբասող միշտ ըզբարիս:  
Վասն այսորիկ տաժանելիս  
Եւ տառապեալ եմք յաշխարհիս  
445 Մեր խաւարած եկեղեցիս  
Ազգս ցրուած յամեն տեղիս:  
Բայց գոհութիւն մարդասիրիս,  
Որ ապեցաք ի յայս վշտիս,  
Զմեզ ոչ թողեալ ի նեղութիւն,  
450 Այլ փոյթ եհան յանդորբութիւն:  
Տուք աւրհնութիւն Հաւրն անեղին  
Եւ միածնի բանի նորին: